ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների
Նախարար պարոն Դավիթ Խուդաթյանին
«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության
զարգացման ՀԿ-ի նախագահ Արփինե Հակոբյանից
էլ. փոստ՝ info@ngoc.am; arpinengoc@gmail.com
հեռ.՝ +374 91643317; +374 91743315

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Խուդաթյան,

Ձեզ ենք ներկայացնում Լոռու մարզի Վանաձոր համայնքում տեղակայված և Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում գործունեություն ծավալող «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից գործող հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար։

Կից ներկայացնում ենք հետևյալ փաստաթղթերը՝

1. Կազմակերպության պետական գրանցման վերաբերյալ միասնական գրանցամատյանի քաղվածքի պատճեն,
2. Կանոնադրության պատճեն,
3. Կոնտակտային տվյալներ,
4. Կազմակերպության ներկայացուցչի ինքնակենսագրական,
5. Կազմակերպության փորձը հաստատող փաստաթուղթ։

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀԿ Կենտրոնը ավելի քան 20 տարի է գործում է համայնքային զարգացման և քաղաքացիների մասնակցության խթանման ոլորտներում։ Վերջին 10 տարվա ընթացքում կազմակերպությունն իրականացրել ավելի քան մեկ տասնյակ նախագծեր միտված տեղական ինքնակառավարման համակարգի բարելավմանը, կանանց ու երիտասարդների մասնակցության բարձրացմանն ու համայնքային զարգացմանը։

Հարգանքով և համագործակցության ակնկալիքով՝

Արփինե Հակոբյան _____

ՀԿ Կենտրոնի նախագահ

08/դեկտեմբեր/2025